

**ԼԻԶԵՆԳԻ ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ՀՀ-ՈՒՄ. ՀԱՐԿԱՅԻՆ,
ՀԱՇՎԱՊԱՀԱԿԱՆ ԵՎ ԻՐԱՎԱԿԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄԸ**

ԼՈՒՄԻՆԵ ՄԱՐԳԱՐՅԱՆ

Հայաստանի Հանրապետությունում «լիզինգ» ֆինանսական գործիքի ներդրման, գործարկման և հետագա զարգացման առումով առկա են մի շարք հիմնախնդիրներ: Ուստի անհրաժեշտ է մանրակրկիտ ուսումնասիրել դրանք և տալ այնպիսի լուծումներ, որոնց շնորհիվ հնարավոր լինի հարթել բոլոր այն խոչընդոտները, որոնք խանգարում են ՀՀ-ում ֆինանսական համապատասխան գործառնության իրականացմանը:

Հայաստանի Հանրապետությունում լիզինգի զարգացման հեռանկարի վերաբերյալ սկզբնական պատկերացում կազմելու համար նախ ներկայացնենք այս ֆինանսական գործիքի ընկալման և մեկնաբանման հետ կապված բարդությունները: «Լիզինգ» եզրաբառը փոխառվել է անգլերենից («leasing»): Վերջինս հայերենում օգտագործվում է՝ նկարագրելու այն փոխհարաբերությունները, որոնք համապատասխանում են ՀՀ քաղաքացիական օրենսգրքով սահմանված «վարձակալություն» տերմինին: Անգլերեն «renting» բառը նույնպես հայերեն թարգմանվում է *վարձակալություն*, սակայն մայր լեզվում օգտագործվում է կարճաժամկետ գործարքները նկարագրելու համար: Ըստ էության՝ պարզ չէ, թե ՀՀ քաղաքացիական օրենսգրքով սահմանվող «ֆինանսական վարձակալություն» եզրույթը կիրառվում է որպես «լիզինգ», թե՞ որպես «ֆինանսական լիզինգ» տերմինի հոմանիշ: ՀՀ ԿԲ-ի կողմից հաստատված մի շարք իրավական ակտերում օգտագործվում է «ֆինանսական լիզինգ», այլ ոչ թե «ֆինանսական վարձակալություն»: Այսպիսով՝ թեև «լիզինգը» «վարձակալության» ուղղակի հոմանիշը չէ, այնուամենայնիվ, արտահայտում է դրա իմաստը: Համաձայն ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 677-րդ հոդվածի՝ «լիզինգ» տերմինը «ֆինանսական վարձակալության» հոմանիշը և վարձակալության տարատեսակներից մեկն է: ՀՀ հաշվապահական հաշվառման ստանդարտներում¹ (այսուհետև՝ ՀՀՀՀՄ) «ֆինանսական վարձակալություն» տերմինը հիշատակվում է «գործառնական վարձակալություն» տերմինի հետ մեկտեղ: Հավելենք նաև, որ ՀՀ օրենսդրությամբ սահմանված «լիզինգ» / «ֆինանսական վարձակալություն» տերմինով նկարագրվող գործարքը նշվում է՝ «Finance lease»:

Փաստորեն՝ վարձակալություն = leasing, ֆինանսական վարձակալություն = լիզինգ = finance lease, գործառնական վարձակալություն = operating lease:

Անշուշտ, անհրաժեշտ է հստակ մեկնաբանել տերմինն ու ճշգրտել կիրառվման հնարավորությունների շրջանակը՝ ավելորդ շփոթից և տարաձայնություններից խուսափելու նպատակով:

¹ Տե՛ս ՀՀՀՀՄ 17, գլուխ 3, հոդված 3:

Ֆինանսական վարձակալությունը պայմանագիր է, որը թույլ է տալիս վարձատուին պահպանել ակտիվի նկատմամբ սեփականության իրավունքը որպես սեփականատեր՝ սեփականության բոլոր ռիսկերը և հասույթները փոխանցելով վարձակալին: Ֆինանսական վարձակալությունը հայտնի է նաև որպես ամբողջությամբ վերադարձելի վարձակալություն, քանի որ վարձակալության ընթացքում կատարվող վճարումները մասնամարում են վարձակալի՝ ակտիվի ձեռքբերման ծախսերը (մնացորդի արժեքը սովորաբար չի գերազանցում ծախսերի 20%-ը): Բացի այդ, վճարումները ծածկում են վարձատուի ֆինանսավորման ծախսերը և ապահովում շահույթ: Ֆինանսական վարձակալության տնտեսական էությունը ավելի շատ գնումների ֆինանսավորումն է, քան զուտ վարձակալությունը:

Ֆինանսական վարձակալության՝ քաղաքացիական օրենսգրքի (հոդված 677) և ՀՀՀՀՄ 17-ի (գլուխ 3, հոդված 3) սահմանումները տարբերվում են:

ՀՀ հաշվապահական հաշվառման ստանդարտ 17-ը վերաբերում է լիզինգին². վարձակալության ֆինանսական կամ գործառնական լինելը կախված է գործարքի էությունից և ոչ թե պայմանագրի ձևից: Մանրամասները.

Քաղաքացիական օրենսգրքով վարձակալությունը կոհտարկվի որպես ֆինանսական, եթե.

- վարձատուն պարտավորվի վարձակալի կամ իր կողմից ընտրված գույքը ձեռք բերել սեփականության իրավունքով,
- վարձակալը պարտավորվի վերը նշված գույքը ձեռք բերելուց հետո վարձակալել վարձատուից,
- վարձատուն, վարձակալի համար գույք ձեռք բերելիս, վաճառողին պարտադիր ծանուցի, որ գույքը նախատեսված է որոշակի անձի վարձակալության հանձնելու համար,
- վաճառող ընտրելու պատասխանատվությունը դրվի վարձատուի վրա, վարձակալն իրավունք կունենա իր ընտրությամբ առուվաճառքի պայմանագրից բխող պահանջներն անմիջականորեն ներկայացնել ինչպես գույքը վաճառողին, այնպես էլ վարձատուին, որոնք համապարտ պատասխանատվություն կկրեն վարձակալի առջև,
- վաճառող ընտրելու պատասխանատվությունը դրվի վարձակալի վրա, և այլ բան նախատեսված չլինի ֆինանսական վարձակալության պայմանագրով, վարձատուն պատասխանատվություն չի կրի վարձակալի առջև առուվաճառքի պայմանագրից բխող պահանջները վաճառողի կողմից չկատարելու դեպքում:

Ֆինանսական վարձակալության՝ քաղաքացիական օրենսգրքի սահմանման առանձնահատկություններն են.

- ֆինանսական վարձակալության պայմանագրով կարող է նախատեսվել, որ վաճառողի և ձեռք բերվող գույքի ընտրությունը կատարվի ինչպես վարձատուի, այնպես էլ վարձակալի կողմից,
- ֆինանսական վարձակալության պայմանագրի՝ վարձակալված գույքը վարձակալության ժամկետի ավարտից հետո կարող է անցնել վարձակալի սեփականությանը,
- ֆինանսական վարձակալության պայմանագիրը կարող է կնքվել ցանկացած ժամկետով,
- կողմերն ազատ են՝ սահմանելու ցանկացած մեծության վարձավճար, որը ոչ մի կերպ չի հարաբերակցվի (կոռելացվի) վարձակալված գույքի իրական արժեքի հետ:

² Տե՛ս ՀՀՀՀՄ 17, գլուխ 4 (Լիզինգի դասակարգում), հոդված 8:

– Վարձակալությունը համարվում է ֆինանսական, եթե, ըստ էության, վարձակալին են փոխանցվում սեփականությանը հատուկ բոլոր ռիսկերը և օգուտները:

Վերը նշված գլխի 8-րդ հոդվածում նշվում են այն պայմանները, որոնցից որևէ մեկի առկայությամբ վարձակալությունը կհամարվի ֆինանսական.

- վարձակալված ակտիվի սեփականության իրավունքը վարձակալության ժամկետի վերջում փոխանցվում է վարձակալին,
- վարձակալը հնարավորություն ունի տվյալ ակտիվը գնելու այն գնով, որը, ենթադրվում է՝ բավականաչափ ցածր կլինի գնման ամսաթվի դրությամբ առկա իրական արժեքից, և վարձակալության սկզբում արդեն կարելի է վստահ լինել, որ այդ հնարավորությունը կիրագործվի,
- վարձակալության ժամկետում ներառվում է ակտիվի օգտակար ծառայության մեծ մասը,
- վարձակալության սկզբում նվազագույն վարձավճարի արժեքը հավասար է վարձակալված ակտիվի առնվազն իրական արժեքին,
- վարձակալված ակտիվների յուրահատուկ բնույթի պատճառով միայն վարձակալն է ի վիճակի օգտագործելու դրանք առանց էական ձևափոխությունների:

Ըստ մեր դիտարկման՝ բախվում ենք հակասության. ՀՀՀՀՄ-ով սահմանվող ֆինանսական վարձակալության գործարքը միշտ չէ, որ համապատասխանում է քաղաքացիական օրենսգրքով սահմանվող ֆինանսական վարձակալության պայմանագրի պայմաններին, և ընդհակառակը⁴: Նման գործարք կարող է իրականացնել ցանկացած ընկերություն՝ կնքելով «պարզ» վարձակալության պայմանագիր, թեև հաշվապահության մեջ այս գործարքը կդիտվի որպես ֆինանսական վարձակալություն:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի ֆինանսական վարձակալության (լիզինգի) պայմանագրի համաձայն՝ վարձատուն պարտավորվում է վարձակալի նշած գույքը սեփականության իրավունքով ձեռք բերել վարձակալի կողմից ընտրված վաճառողից և վճարի դիմաց հանձնել վարձակալի ժամանակավոր տիրապետմանը (հոդվածը փոփոխության է ենթարկվել 2002 թ. մայիսի 29-ի որոշմամբ):

Ֆինանսական վարձակալության երկակի սահմանման կարելի է հանդիպել նաև այլ երկրներում: Օրինակ՝ ԱՄՆ-ում լայնորեն կիրառվող US GAAP⁵ հաշվապահական ստանդարտներում առկա է ՀՀՀՀՄ-ին համահունչ ֆինանսական վարձակալության սահմանում: Նույն երկրի Միասնական առևտրային օրենսգրքում (այսուհետև՝ UCC) տրված է ֆինանսական վարձակալության սահմանում, որը հիմնականում համընկնում է ֆինանսական վարձակալության՝ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի սահմանմանը, հատկապես երբ խոսքը գործարքում վաճառողի և ձեռք բերվող գույքի՝ վարձակալի կողմից ընտրության մասին է: Ըստ UCC-ի՝⁶ ֆինանսական վարձակալությունը ֆինանսական հաստատություններին հնարավորություն է ընձեռում ֆինանսական վարձակալության համար նախատեսված գույքը վարձակալել բացառապես որպես ֆինանսական միջոց և պատասխանատվություն չկրել դրա որակի համար: Սա համապատասխանում է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի սահմանմանը:

³ Տե՛ս ՀՀՀՀՄ 17, գլուխ 4, հոդված 6:

⁴ Առաջնային է համարվում ՀՀ քաղաքացիական օրենսգրքը:

⁵ Տե՛ս U.S. GAAP Codification of Accounting Standards (Generally Accepted Accounting Principles, GAAP):

⁶ Տե՛ս Uniform Commercial Code UCC (first published in 1952):

Հավելենք նաև՝ առանձին կետով սահմանվում է, որ տվյալ պայմանագրի շրջանակներում վարձակալությունը համարվում է ֆինանսական՝ համաձայն UCC-ի (կամ վարձակալությունը համարվում է «UCC 2A ֆինանսական վարձակալություն»): Սա կարելի է կիրառել նաև մեր երկրում:

Ներկայացնենք UCC 2A-ի ֆինանսական վարձակալությանը վերաբերող հիմնական դրույթները.

- վարձակալված գույքի թերությունների վերաբերյալ բոլոր բողոքները ներկայացվում են բացառապես ապրանքների փաստացի մատակարարին (վաճառողին),
- վարձակալը պարտավոր է վարձատուին վճարել վարձավճարը՝ անկախ վարձակալված ապրանքի թերություններից:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 684-րդ հոդվածով սահմանվող դրույթները (եթե վաճառողի և ձեռք բերվող գույքի ընտրությունը կատարում է վարձակալը) նման են UCC 2A վերոհիշյալ դրույթներին:

Կարծում ենք՝ Հայաստանում գործող բանկերն ու վարկային կազմակերպությունները ֆինանսական վարձակալության պայմանագրերում պետք է մատնանշեն, որ տվյալ գործարքը կատարվում է ըստ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի սահմանման:

Այժմ անդրադառնանք գործառնական վարձակալությանը:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքում *գործառնական վարձակալության* սահմանում չի տրվում: Այդ եզրույթի սահմանումն *առկա է ՀՀՀՀՄ 17-ում*, որի համաձայն՝ ֆինանսական վարձակալություն չհանդիսացող վարձակալության այլ ձևերը համարվում են գործառնական: Այսպիսով՝ վարձակալության գործարքների ամբողջությունը, բացառությամբ մի մասնավոր դեպքի՝ ըստ ՀՀՀՀՄ-ի՝ ֆինանսական վարձակալության, հաշվապահության մեջ դիտվում է որպես գործառնական վարձակալություն: Փաստորեն, ՀՀ քաղաքացիական օրենսգրքում սահմանված *ֆինանսական վարձակալությունը* կարող է չհամարվել այդպիսին ըստ ՀՀՀՀՄ-ի, որտեղ սահմանվում է վարձակալության միայն 2 տեսակ, քանի որ այն վարձակալությունը, որը ֆինանսական չէ համաձայն ՀՀՀՀՄ-ի, պետք է համարվի գործառնական (գործողության ոլորտը՝ կետ 3): Այսպիսով՝ մի *հակասություն* ևս. ՀՀՀՀՄ-ի համաձայն՝ գործառնական վարձակալությունը կարող է իրականացվել քաղաքացիական օրենսգրքով սահմանվող ֆինանսական վարձակալության պայմանագրով: Օրինակ՝ առանց գնման իրավունքի ավտոմեքենայի վարձակալությունը երկու տարի ժամկետով է, որը իրականացվում է ֆինանսական վարձակալության պայմանագրով (համաձայն ՀՀ քաղաքացիական օրենսգրքի), մինչդեռ վարձավճարի ներկա արժեքը կազմում է սկզբնական արժեքի ընդամենը 20%-ը: Սակայն, ըստ ՀՀՀՀՄ-ի, նման գործարքը չի դիտվի որպես ֆինանսական վարձակալություն, հետևաբար՝ կհամարվի գործառնական: Այսպիսով, հանգում ենք հետևյալ եզրակացության՝ գործառնական վարձակալությունը բանկերի և վարկային կազմակերպությունների գործառնակ է: Մանրամասնենք. բանկերի⁷ և վարկային կազմակերպությունների⁸ գործունեությունը կարգավորող ՀՀ օրենքները սահմանում են այն ֆինանսական գործառնությունների ցանկը, որոնք կարող են իրականացվել այստեղ: Դրանցում հստակ ամրագրված է ֆինանսական վարձակալությունը, սակայն բացակայում է «գործառնական վարձակալություն» հասկացությունը: Արդյոք կարելի⁹ է հետևություն անել, որ ֆինանսական հաստատություններին արգելվում է զբաղվել գործառնական վարձակալությամբ: Փաստորեն, եթե վարձակալության գործարքը իրականացվի ՀՀ քաղաքացիական օրենսգրքի համաձայն, ապա հաշվապահության մեջ դա կարող է դիտարկվել թե՛ որպես ֆինանսական, թե՛ որպես

⁷ Տե՛ս «Բանկերի և բանկային գործունեության մասին» ՀՀ օրենք, հոդված 34:

⁸ Տե՛ս «Վարկային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենք, հոդված 8:

գործառնական վարձակալություն: Այստեղից մի հետևություն ևս. ՀՀ-ում գործող ֆինանսական ինստիտուտները կարող են զբաղվել գործառնական վարձակալությամբ և դրա համար բավարար է, որ գործարքն իրականացնեն ըստ ՀՀ քաղաքացիական օրենսգրքում սահմանված ֆինանսական վարձակալության պայմանագրի: Այս իմաստով, անշուշտ, կարող է առաջանալ ռիսկ. ֆինանսական ոլորտի վերահսկողի կողմից միանշանակ չմեկնաբանվի վերը նկարագրված գործարքի էությունը: Այս առումով, պետք է հստակություն մտցնել «Բանկերի և Բանկային գործունեության մասին» և «Վարկային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքներում: Անշուշտ, բանկերի և վարկային կազմակերպությունների համար ոչ ռիսկային կլինի տրամադրել ֆինանսական վարձակալության ծառայություններ, որոնք կհամարվեն այդպիսին թե՛ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի, թե՛ ՀՀՀՀՄ շրջանակներում:

Այժմ քննարկենք վարձակալված գույքի օգտագործման տիրույթը: Համաձայն ՀՀ քաղաքացիական օրենսգրքի՝ վարձակալը կարող է օգտագործել ֆինանսական վարձակալության պայմանագրով իր տիրապետմանն անցած գույքը ցանկացած նպատակով (հոդված 677, մաս 1. փոփոխվել է 2002 թ. մայիսի 29-ի որոշմամբ): Այսպես՝

- Ֆինանսական վարձակալության (լիզինգի) պայմանագրով վարձատուն պարտավորվում է վարձակալի նշած գույքը սեփականության իրավունքով ձեռք բերել վարձակալի կողմից որոշված վաճառողից և վճարի դիմաց հանձնել վարձակալի ժամանակավոր տիրապետմանը **ձեռնարկատիրական նպատակներով օգտագործելու համար** (ընդգծված մասը փոփոխվել է):

Գույքի սեփականության իրավունքի փոխանցում նախատեսող պայմանագրի հիման վրա իրականացվող ֆինանսական վարձակալության գործարքը դիտվում է որպես ապրանքի մատակարարման գործարք: ՀՀ ԱԱՀ-ի մասին օրենքի 6-րդ հոդվածի համաձայն՝ այդ գործարքը համարվում է հարկվող՝ գույքի արժեքի մասով: Հետևաբար՝ ֆինանսական վարձակալության պայմանագրի համաձայն, պետք է դուրս գրվի հարկային հաշիվ՝ գույքի արժեքով: ՀՀ ԱԱՀ-ի մասին օրենքի հոդված 15-ի 17-րդ կետի համաձայն՝ ԱԱՀ-ից ազատվում են. բանկերի և վարկային կազմակերպությունների կողմից իրականացվող ֆինանսական հետևյալ գործառնությունները և ծառայությունները՝ ներմուծված այն ապրանքների՝ ֆինանսական վարձակալությամբ տրամադրումը, որոնց ներմուծման ժամանակ ավելացված արժեքի հարկը մաքսային մարմինների կողմից չի հաշվարկվել և չի գանձվել (0% մաքսատուրք), նաև ֆինանսական վարձակալությունից ստացված տոկոսագումարները:

Աղյուսակ 1

Ներկրված առարկաների հարկման տարբերակները

Մաքսատուրք	ԱԱՀ	Օրինակներ
0%	0%	Հրատարակչական, սննդի վերամշակման և բժշկական սարքավորումներ, բեռնատար ավտոմեքենաներ, ճանապարհաշինական մեքենաներ և այլն
0%	20%	Ձայնի, պատկերի կամ այլ տվյալների փոխանցման կամ ընդունման բազային կայաններ, ռադիո- կամ հեռուստահեռարձակման սարքավորումներ
10%	20%	Մարդատար ավտոմեքենաներ

Ֆինանսական կազմակերպության համար ԱԱՀ պարտավորության ծագման պահ է համարվում գույքը վարձակալությամբ հանձնելը: Բայց քանի որ ֆինանսական կազմակերպությունները ԱԱՀ-ով միաժամանակ հարկվող և չհարկվող գործարքներ իրականացնողներ են, *ճիշտ կլինի ֆինանսական վարձակալության մասով իրականացնել առանձնացված հաշվառում՝ պարտավորությունները բյուջեի նկատմամբ և ձեռքբերման ժամանակ վճարված ԱԱՀ գումարները հաշվանցելու նպատակով:*

Լիզինգի հաշվապահությունը ներառում է ֆինանսական վարձակալություն.

- վարձատուն պետք է վարձակալված ակտիվները դիտարկի որպես դեբիտորական պարտքեր, որոնց գումարը հավասար է վարձակալության գուտ ներդրումներին,
- վարձակալության դիմաց վարձավճարների գծով դեբիտորական պարտքերը դիտվում են որպես ներդրումների հիմնական գումարի մարում, ֆինանսական եկամուտ, ներդրումների հատուցում:

Լիզինգի պայմանագրով վարձակալության իրավունքի գրանցումը կատարվում է գույքի գրավի իրավունքի գրանցումը կարգավորող նույն օրենքներով և իրավական ակտերով, հետևաբար՝ լիզինգի պայմանագրով վարձակալության իրավունքի և գույքի գրավի իրավունքի գրանցման մեխանիզմները հիմնականում նույնն են:

Ամփոփելով փաստենք՝ ներկայումս ՀՀ լիզինգային գործառույթների դաշտը կարգավորող օրենսդրությունը և այլ իրավական ակտեր հակասում են միմյանց և ստեղծում արհեստական խոչընդոտներ նշված ոլորտի դինամիկ զարգացման համար: